ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի Մ Ա Ր Զ Պ Ե Տ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» օգոստոսի 2023թ. *ՆՄՈ/350-Ա*

ք. Արմավիր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2023 թվականի հուլիսի 25-ի ՆՄՈ/321-Ա և հուլիսի 26-ի ՆՄՈ/326-Ա որոշումները, «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում հանձնման-ընդունման աշխատանքներն իրականացնելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբին (Ա. Հակոբյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հաշվապահ Արթուր Աբրահամյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Ա. Հակոբյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 10 աշխատանքային օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ *Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

09.08.2023

X

VERIFIED OCSP 09.08.2023 09:37:42 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2023 թվականի օգոստոսի 09-ի
ՆՄՈ/350Ա որոշման

Աշխատանքային խումբ

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Հակոբյան - ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
ֆինանսական վարչության
հաշվապահական հաշվառման բաժնի պետ.

Անդամներ՝

Լ. Հարությունյան - ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
իրավաբանական բաժնի պետ.

Հ. Հարությունյան - ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
առողջապահության և սոցիալական
ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ.

Գ. Պետրոսյան - ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
առողջապահության և սոցիալական
ոլորտի հարցերի վարչության մասնագետ:

Հանձնող՝ Տ. Պետրոսյան՝ «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության նախկին ժամանակավոր պաշտոնակատար.

Ընդունող՝ Հ. Հովհաննիսյան՝ «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն:

Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝ ***Դ. Դավթյան***